



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ  
 ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԵՋ WORLD VISION-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Նախօրօք ճշդուած ժամադրութեամբ մը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Սարսիրոսեան Ուրբաթ, 18 Օգոստոսին ընդունեց World Vision աշխարհատարած կազմակերպութեան Հայաստանի ու Լոս Անճելըսի բաժանմունքներու ներկայացուցիչները եւ անոնց հետ խորհրդակցեցաւ այս կազմակերպութեան բարեսիրական աշխատանքներուն ու ծառայութիւններուն մասին:

Հայաստանի մէջ World Visionի գրասենեակին վարիչը՝ Մարք Բելի, եւ կազմակերպութեան Լոս Անճելըս բաժանմունքի պատասխանատուներէն ճոն Պուշըպէլ կէսօրուան մօտ ժամանեցին Ազգային Առաջնորդարանի առժամեայ գրասենեակը, Էնսիսօ, եւ աւելի քան մէկ ժամ տեւողութեամբ տեսակցութիւն ունեցան Առաջնորդ Սրբազանին հետ: Մարք Բելի ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ ու ծանօթութիւններ տուաւ իր կազմակերպութեան Հայաստանի մէջ ծաւալած գործունեութեան ու արդիւնքներուն մասին: Կարեւորութեամբ վեր առնուեցան նաեւ Լիբանանի վերջին դեպքերը, ստեղծուած կացութիւնն ու օժանդակութեանց կարիքները, տրուած ըլլալով, որ World Visionի օժանդակութեանց դաշտերը կը տարածուին նաեւ Լիբանանի վրայ ու այս կազմակերպութիւնը սերտօրէն կը գործակցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ:

Առաջնորդ Սրբազանը կազմակերպութեան ներկայացուցիչներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ու իր բարեմաղթութիւնները, միաժամանակ շեշտելով, որ Լիբանան այս հանգրուանին օժանդակութեանց մեծ կարիք ունի մանաւանդ գաղթականներու տագնապին հետեւանքով: Մարք Բելի եւ ճոն Պուշըպէլ յայտնեցին, որ այս փափաքը պիտի փոխանցեն World Visionի պատասխանատուներուն ու մեր Թեմին ու Կաթողիկոսութեան հետ գործակցաբար պիտի ընեն իրենց կարելին:

**PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF  
 WORLD VISION**

On Friday, August 18, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with representatives of World Vision Armenia and Los Angeles to discuss the humanitarian works and mission of the organization.

Mark Kelly, director of World Vision in Armenia, and Jean Bouchebel, World Vision representative in Los Angeles, met with the Prelate at the Prelacy offices in Encino, where Mr. Kelly imparted details to the Prelate about projects the organization has undertaken in Armenia and their outcomes. The current situation in Lebanon was also discussed, being that World Vision's humanitarian efforts extend to that region as well, and taking into consideration that the organization works closely with the Holy See of Cilicia. The Prelate conveyed to the representatives the best wishes of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, and once again stressed Lebanon's urgent need for assistance.

Mr. Kelly and Jean Bouchebel pledged they would convey the appeal to the directors at World Vision, and with the collaboration of the Catholicosate and the Western Prelacy would strive to alleviate the situation.